



# Armenian Church Of Our Saviour

Ս. ՓՐԿԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ, ՌԻՍԻԻ

Rev. Father Aved Terzian  
Pastor

Մարտ 18 1987

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան, Առաջնորդ  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Ամերիկայի  
Նիւ Եօրք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Սուրբ Փրկիչ Եկեղեցւոյս տարեկան ծխական ժողովը զուամարուեցաւ Կիրակի  
Փետրուար 22, 1987 յաւարտ արարողութեանց ժամը 10:45ին 127 տրատու անդամ-  
ներու մասնակցութեամբ: Քուէարկութեան մասնակցեցան 173 տրատու անդամներ:  
Եկեղեցւոյս տրատու անդամներուն թիւն է 536:

Օրինաւոր կերպով կատարուեցան ծխական խորհուրդի, Ընտրողական Յանձնա-  
խումբի եւ Հաշուեքննիչ Յանձնախումբի ընտրութիւնները: Ծխական խորհուրդին  
վերընտրուեցան Տօթ. Բապրդդ Անուսպիկեան եւ Պրն. Հարլս Շարուկեան. իսկ  
նորընտիր անդամներն են Տիարք՝ Պէրի Պիլգէրեան, Էտուրտ Պիլգէրեան Կտր. եւ  
Արթրր Սրապեան: Յաջորդ առաւելագոյն քուէ ստացած անձն է Օր. Մարշա Յովհաննէսեան:

Համաձայն Առաջնորդարանէն ստացած մեր ուղղութեան, հաճեցէք նաեւ ներփակ  
զանել Եկեղեցւոյս Տեղեկագիրներու Պրակը, Անդամական ժողովին առենագրութիւնը,  
Քուէարկութեան համարեա արդիւնքը, Եկեղեցւոյս ընդհանուր ելեւմտական հաշուետը-  
լութիւնը եւ Առաջնորդարանէն ղրկուած հարցարանը՝ պատասխանուած:

Յանձնելով վերոյիշեալ գրութիւնները Ձերդ բարձր նկատողութեան եւ  
կը սպասենք ընտրութեանց վաւերացման:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն

ի դիմաց ծխական Անդամական ժողովի

Խոնարհաբար՝

Տ. Աւետ Քահանայ Թէրզեան

Նախագահ

